Պարույր Սևակ

Վիճում եմ

Ես վիճում եմ,
մե՞կ է՝ ո՛ւմ հետ,
Ինքըս ի՞նձ հետ,
Թե՞ ուրիշի:
Իսկ դու մի պահ ակա՛նջ արա
Ու լա՞վ հիշիր:
Ես վիճում եմ և աստղերից լավերի՛ հետ,
Եթե նրանք տալիս են մեզ աղո՞տ մի լույս,
Բայց ո՛չ կրակ...
Ես վիճում եմ կանաչների ծովերի՛ հետ,
Եթե նրանք դաշտում փտում,
Բայց չեն մտնում
Ո՛չ մի մարագ:
Ես վիճում եմ զավակի հետ,
Ա՛յն զավակի,
Որ իր մորը փող է տալիս դատարանով...
Ես վիճում եմ ավագի հետ,
Ա՛յն ավագի,
Որ կրտսերից ինքը պիտի խելք հավաքի,
Մինչդեռ նրան իր ետևից
Քարշ է տալիս հաստ պարանով...

Ես վիճում եմ շվաքի հետ,
Ա՛յն շվաքի,
Որ արևից թունդ է վառում:
Ես վիճում եմ նվագի հետ,
Ա՛յն նվագի,
Որ բոլորին զզվացըրել,
Բայց և այնպես չի դադարում...
Պիտի վիճեմ
Եվ երգի՛ դեմ,
Թե բռնի են երգել տալիս խեղճ երգողին.
Եվ բերքի՛ դեմ,
Թե չի սնում բերք ու բարիք հավաքողին.
Եվ վերքի՛ դեմ,
Թե չի բուժվում, այլ վարակում,
Եվ ներկի՛ դեմ,
Թե ծածկում է, չի՛ նորոգում...
Ես չվիճե՞մ
Ա՛յն կրքի դեմ,
Որ չի ծնում մի նոր որդի,
Այլ պարզապես զուր վատնում է.
Ա՛յն գրկի դեմ՝ հուդայական,
Որ մատնում է...
Ասե՛ք, ինչպե՞ս դեմ չխոսեմ
Ա՛յն պիտակին,
Որ չի սազում, բայց կպչում է և չի պոկվում.
Ա՛յն շիտակին,
Որ դիմակներ փոխելով է մտահոգվում.
Ա՛յն դիտակին,
Որ քնած է.
Ա՛յն կտակին,

Որ գնված է...
Նորի՜ց վիճեմ՝
ա՛յն բախտի հետ,
Որ գալիս է, գալը բարի՜,
Սակայն ու՞ր է - տե՜ղն է պարապ:
Նորի՜ց վիճեմ՝
ա՛յն թխպի հետ,
Որ կուտակվում բոլոր տարին,
Բայց չի դառնում տեղատարափ...
Վիճեմ նաև ա՛յն մութի դեմ,
Որ կուրացնո՜ւմ - ա՛չք չի շոյում,-
Մթնա՜ծ վիճեմ.
Ա՛յն բութի դեմ,
Որ կարծում է՝ շեշտ է դարձել,-
Շեշտվա՛ծ վիճեմ.
Ա՛յն կուտի դեմ,
Որ ցորեն էր մի ժամանակ,
Սրսո՜ւռ ցորեն,-
Վիճեմ լացո՜վ.
Ա՛յն ճութի դեմ,
Որ չի ուտվում,
Ոչ էլ դառնում արդար գինի,-
Հարբա՜ծ վիճեմ.
Ա՛յն փուտի դեմ,
Որ ինքն իրեն սերտ է կարծում,-
Իզո՜ւր վիճեմ.
Ա՛յն տուտի դեմ,
Որ տո՜ւտ չունի՝
Որ անծայր է այս վեճի՛ պես,-
Վիճեմ անվե՜րջ...

Վիճեմ նաև ա՛յն վեճի դեմ,
Որի բերած օգո՞ւտն է շատ, թե՞ վնասը՝
Ես չգիտե՛մ...

20, 26.V.1957թ.
Մոսկվա